## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ, 060888999, khoy.community@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մայիսի 2025 թվականի N 56-Ա

### ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով, և 62-րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2025թվականի մայիսի 15-ի թիվ 5 հերթական նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՅԱՅԼՈՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆՆԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԶԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԿ

ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ԼԻԼԻԹ

ԹԵՔՈՅԱՆ ՍԵՎԴԻՆ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ՍՈՖԻԱ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՌԱՊՅԱՆ ԼԻԶԱ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԻՐԻՆԱ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

2025թ. մայիսի 15
Խոյ համայնք, գ.Գեղակերտ

**ՀԱՎԵԼՎԱԾ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15 - Ի**
**ԹԻՎ 56 - Ա ՈՐՈՇՄԱՆ**

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

3. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

4. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

5" ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

6.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 145-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

7"<<ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ>> ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ, 060888999, khoy.community@gmail.com


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մայիսի 2025 թվականի N 57-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 4.1-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի ։

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՅԱՅԼՈՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆՆԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԶԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԿ

ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ԼԻԼԻԹ

ԹԵՔՈՅԱՆ ՍԵՎԴԻՆ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ՍՈՖԻԱ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՌԱՊՅԱՆ ԼԻԶԱ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԻՐԻՆԱ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Խոյ համայնքի
ավագանու 2025 թվականի
Մայիսի 15-ի N 57- Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



**Ներկայացվել է՝ Խոյ համայնքի ղեկավար Լ. Յայլոյանի կողմից**
**Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2025 թ-ի մայիսի 15-ի N -Ա որոշմամբ**

**ԽՈՅ**

**2025 թ.**

## Բովանդակություն


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........................................................ 2

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ........................................................ 4

2. ՀԱՄԱՅՆՔԻ 2025 Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) ........................................................ 6

3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025 Թ. ԾՐԱԳԻՐԸ ........................................................ 15

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ ........................................................ 20

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ ........................................................ 22

## Ներածություն

Խոյի համայնքապետարանի 2025 թ. տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ-ը) նպատակ ունի արդյունավետ պլանավորման միջոցով բարելավել համայնքում կայացվող որոշումների որակը: Հիմք ունենալով համայնքի 2022-2026թթ. հնգամյա զարգացման ծրագիրը, ՏԱՊ-ը ուղղված է հստակեցնելու տարեկան կտրվածքով համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը և միջոցառումները, դրանց իրականացման համար ներդրվող ռեսուրսներն ու ժամկետները: Որպես համայնքի տարեկան ծրագրային փաստաթուղթ, այն նպատակ ունի ներգրավել համայնքի ներքին և արտաքին ներդրողների հնարավորությունները՝ համայնքային խնդիրներն առավել արդյունավետ լուծելու գործում:

Խոյի համայնքապետարանի 2025 թ. ՏԱՊ-ը բաղկացած է 5 հիմնական բաժիններից, որոնք կառուցված են ծրագրերի նպատակներից արդյունքներին հասնելու տրամաբանական հենքի վրա:

Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները սահմանում են 2025 թ. Խոյ համայնքում ՏԻՄ-երի լիազորությունների շրջանակներում սահմանված նպատակները, զարգացման հիմնական ուղղությունները և խթանները:

2025 թ. նախատեսված ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը ներկայացված են ըստ բնակավայրերի ու դրանց արժեքների:

ՏԱՊ-ում ներկայացվում է նաև համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման տարեկան ծրագիրը՝ պլանավորված գործընթացները և գործողությունները:

ՏԱՊ-ում նախատեսված ծրագրերի ֆինանսավորման պլանը սահմանում է ֆինանսավորման այն աղբյուրները, որոնք պետք է ապահովեն դրանց իրականացումը:

ՏԱՊ-ի իրականացման արդյունավետությունը նախատեսվում է վերլուծել ըստ մոնիթորինգի և գնահատման պլանի՝ կիսամյակային և տարեկան կտրվածքով:

## 1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

**Համայնքի տեսլականը՝**

Խոյ համայնքը նոր որակի համայնքային միջավայրով ակտիվ կյանքով ապրող համայնք է, որտեղ առկա բոլոր սոցիալ-տնտեսական, կենցաղային, հոգևոր-մշակութային խնդիրները գտնում են իրենց լուծումը, մարդիկ ապահովված են աշխատանքով և համայնքի յուրաքանչյուր բնակիչ հնարավորություն ունի ակտիվորեն մասնակցելու համայնքում որոշումների կայացմանը և գործողությունների իրականացմանը, ինչպես նաև լրացնելու իր գիտելիքների, հմտությունների և փորձի պակասը:

Խոյ համայնքը բարեկեցիկ ապրելակերպի պայմաններով ձևավորված, հյուրերի և զբոսաշրջիկների համար գրավիչ, կրթական, մշակութային ու մարզական մատչելի և որակյալ ծառայություններով, զարգացած գյուղատնտեսությամբ, փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման համար գրավիչ գործարար միջավայրով բազմաբնակավայր համայնք է:

**Աղյուսակ 1.Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները**

| Ցուցանիշ | Ելակետային արժեք | Թիրախային արժեք |
|---|---|---|
| Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%) | 11 | 10 |
| Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%) | 30 | 30 |
| Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ) | 32686 | 33500 |
| Համայնքում տվյալ տարվա ընթացքում ներդրումների ծավալը (մլն. դրամ) | 0 | 0 |

**Աղյուսակ 2.Համայնքի ոլորտային նպատակները**

| Ոլորտային նպատակ | Վերջնական արդյունքի | | |
|---|---|---|---|
| | Ցուցանիշ | Ելակետային արժեք | Թիրախային արժեք |
| **Ոլորտ 1. Ընդհանուր**<br>• Ապահովել տեղական ինքնակառավարումը Խոյ բազմաբնակավայր համայնքում, ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգ<br>• Կազմակերպել համայնքային գույքի կառավարումը, նպատակային օգտագործումը | • ՏԻ մարմինների կողմից ընդունված որոշումների հասանելիությունը բնակիչներին %<br>• Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում %<br>• Համայնքային գույքի կառավարումից առաջացած եկամուտների տեսակարար կշիռը սեփական եկամուտների կազմում % | **94**<br>**30**<br>**0.5** | **100**<br>**30**<br>**12** |
| **Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն**<br>• Կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և | • Աղբահանության ծառայության հասանելիությունը բնակավայրերում<br>• Համայնքի խնամվող կանաչապատ հատվածների | **100** | **100** |

| | | | |
|---|---|---|---|
| ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումն ու զարգացումը<br><br>• Ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ | տեսակարար կշիռը կանաչապատ հատվածների մեջ, % | **37** | **50** |
| **Ոլորտ 3. Կրթություն**<br>Կազմակերպել նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության որակյալ ծառայություններ | • Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից օգտվողների տեսակարար կշիռը նախադպրոցական տարիքի երեխաների մեջ, %<br>• Մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայությունից օգտվողների տեսակարար կշիռը այդ տարիքի երեխաների մեջ, % | **49**<br><br>**15** | **52**<br><br>**17** |
| **Ոլորտ 4. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ**<br>• կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, խթանել միջոցառումներին բնակիչների ակտիվ մասնակցությունը<br>• կազմակերպել համայնքի մշակութային կազմակերպությունների աշխատանքը | Համայնքի մշակութային նախաձեռնություններին բնակիչների մասնակցությունը % | **35** | **40** |
| **Ոլորտ 5. Գյուղատնտեսություն**<br>Նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը | Բարելավված ոռոգման համակարգ ունեցող բնակավայրերի տեսակարար կշիռը համայնքի բնակավայրերի կազմում % | **45** | **55** |
| **Ոլորտ 6. Տրանսպորտ**<br>Ապահովել տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը՝ ճանապարհների բարեկարգման միջոցով | Ճանապարհների բարեկարգման միջոցով երթևեկության անվտանգության աճ % | **65** | **75** |
| **Ոլորտ 7. Սոցիալական պաշտպանություն:**<br>Աջակցել համայնքի կարիքավոր ընտանիքներին | Համայնքի կողմից սոցիալական աջակցություն ստացող ընտանիքների տեսակարար կշիռը համայնքում առկա սոցիալապես կարիքավոր ընտանիքների մեջ % | **15** | **18** |

**2. Համայնքի 2025 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)**
**Աղյուսակ 3.ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով**

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի արժեքը (հազ. դրամ) | Բնակավայրը |
|---|---|---|---|
| **Ոլորտ 1. Ընդհանուր** | | | |
| 1 | Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում | 646100,0 | Բոլոր բնակավայրերում |
| **Ընդամենը** | | **646100,0** | |
| **Ոլորտ 2. Պաշտպանություն** | | | |
| **1** | **Քաղաքացիական պաշտպանություն** | **1000,0** | Բոլոր բնակավայրերում |

| | | | |
|---|---|---|---|
| **Ընդամենը** | | **1000,0** | Բոլոր բնակավայրերում |
| **Ոլորտ 3. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն** | | | |
| 1 | Աղբահանության և սանիտարական մաքրման իրականացում | 46750.0 | Բոլոր բնակավայրերում |
| 2 | Հանրային հատվածների բարեկարգում, կանաչապատ տարածքների ընդլայնում | 3000,0 | Բոլոր բնակավայրերում |
| 3 | Համայնքի ենթակառուցվածքների պահպանում և զարգացում | 3000,0 | Բոլոր բնակավայրերում |
| **Ընդամենը** | | **52750,0** | |
| **Ոլորտ 4. Կրթություն** | | | |
| 1 | Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում համայնքում | 170000.0 | Բոլոր բնակավայրերում |
| **Ընդամենը** | | **170000** | |
| **Ոլորտ 5. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ** | | | |
| 1 | Մշակութային կյանքի կազմակերպում համայնքում | 164020,0 | Բոլոր բնակավայրերում |
| **Ընդամենը** | | **164020,0** | |
| **Ոլորտ6. Գյուղատնտեսություն** | | | |
| 1 | Խթանել գյուղատնտեսության զարգացումը | 20203,0 | Բոլոր բնակավայրերում |
| **Ընդամենը** | | 20203,0 | |
| Ոլորտ 7. Տրանսպորտ | | | |
| 1 | Ներհամայնքային ճանապարհների պահպանում և շահագործում | 202896,0 | Բոլոր բնակավայրերում |
| **Ընդամենը** | | 202896,0 | |
| **Ոլորտ 8. Սոցիալական պաշտպանություն** | | | |
| 1 | Սոցիալական աջակցություն անապահով ընտանիքներին | 35000.0 | Բոլոր բնակավայրերում |
| **Ընդամենը** | | **35000.0** | |
| **Ընդհանուրը** | | **1138969,0** | |

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

| Ամփոփ նկարագիր | Արդյունքային ցուցանիշներ | Տեղեկատվության աղբյուրներ | Պատասխանատու | Ժամկետ | Ռիսկեր |
|---|---|---|---|---|---|
| **Ոլորտ 1. Ընդհանուր** | | | | | |
| **Ոլորտի նպատակ.**<br>• Ապահովել տեղական ինքնակառավարումը Խոյ բազմաբնակավայր համայնքում, ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգ<br>• Կազմակերպել համայնքային գույքի կառավարումը, նպատակային օգտագործումը | • ՏԻ մարմինների կողմից ընդունված որոշումների հասանելիությունը բնակիչներին 100%<br>• Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում 30 %<br>• Համայնքային գույքի կառավարումից առաջացած եկամուտների տեսակարար կշիռը սեփական եկամուտների կազմում 0,5% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, Մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավար | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: Աճուրդների, մրցույթների մասնակիցների բացակայություն |
| **Ծրագիր 1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Ապահովել որակյալ համայնքային ծառայությունների մատուցումը | Համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների որակը - լավ | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, համայնքի համացանցային կայք | Աշխատակազմի քարտուղար | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Միջոցառումներ.**<br>1. Համակարգչային և մասնագիտական, այլ ծառայությունների ձեռք բերում<br>2. ՔՍԳ աշխատանքների կազմակերպում<br>3. Խոյ համայնքի աշխատակազմի և 17 բնակավայրերի վարչական ղեկավարների գործունեության ապահովում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Չափագրվող և պետական գրանցման ենթակա գույքային միավորների թիվը- 85<br>• Հարկերի հաշվարկման բազաներում անճշտությունների նվազեցում, 10%<br>• ՀԿՏ համակարգի, պաշտոնական կայքի շահագործում -այո<br>• Սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը - 100 %<br>• ՔՍԳ կողմից մատուցվող ծառայությունների թիվը - 7<br>• Ավագանու նիստերի թիվը - 12 | Խոյ համայնքապետարան, «ՏՀԶՎԿ» ՀԿ, «Վեկտոր պլյուս» ՍՊԸ, ՀԾ | Բնակավայրերի վարչական ղեկավարներ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | • Ավագանու նիստերի առցանց հեռարձակում- առկա է<br>• Ծառայություններ մատուցող համայնքային կառույցների թիվը -7<br><br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Աշխատակիցների թիվը համայնքի կենտրոնում - 69<br>• Աշխատակիցների թիվը բնակավայրերում - 80<br>• Համակարգիչների թիվը - 69<br>• ՔՍ գրասենյակների թիվը - 1<br>• Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 631976.6հազ. դրամ, որից համայնքի բյուջե 631976.6 հազ. դրամ | | | | |
| **Ծրագիր 2. Համայնքային գույքի կառավարում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ**<br>Համայնքային գույքի արդյունավետ և նպատակային կառավարում | Համայնքի գույքի կառավարումից առաջացած եկամուտների ավելացում - 12% | Մրցույթների և աճուրդների մասին հայտարարություններ, արձանագրություն-ներ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 տարի | Աճուրդների, մրցույթների մասնակից-ների բացակայութ յուն |
| **Միջոցառումներ.**<br>1.Համայնքի հողատարածքների վարձակալության մրցույթների և աճուրդ-վաճառքի կազմակերպում համաձայն գույքի օտարման 2024 թ. ծրագրի | **Ելքի ցուցանիշներ**<br>• Ակնկալվող եկամուտներ գույքի կառավարումից- 30000.0 հազար դրամ<br>• Համայնքի գույքի կառավարման թափանցիկության ապահովում - առկա է<br>• Համայնքի գույքի օտարման 2025 թ. ծրագիր – առկա է<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Օտարվող համայնքային հողեր, քմ - 49708<br>Գործող վարձակալության պայմանագրեր | Խոյի համայնքապետարան | Գույքի օտարման և վարձակալության աճուրդներն ու մրցույթները կազմակերպող հանձնաժողովներ | | |
| **Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն** | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Ոլորտի նպատակներ.**<br>• Կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումն ու զարգացումը<br>• Ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ | • Աղբահանության ծառայության հասանելիությունը բնակավայրերում -17 բնակավայր<br>• Խմելու ջրի մատակարարման վերանորոգված ներքին համակարգեր<br>• Համայնքի խնամվող կանաչապատ հատվածների տեսակարար կշիռը կանաչապատ հատվածների մեջ, 50% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, Մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավար | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն |
| **Ծրագիր 1. Աղբահանության և սանիտարական մաքրման իրականացում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Ապահովել համայնքի բոլոր բնակավայրերում բնակչությանը մատուցվող աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը | Աղբահանության և սանիտարական մաքրման իրականացում ըստ հաստատված սխեմաների և ժամանակացույցի – առկա է | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | «Խոյ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» Համայնքային հիմնարկ հիմնարկի ղեկավար | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն |
| **Միջոցառումներ.**<br>1. Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում «Խոյ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» Համայնքային հիմնարկ -ի միջոցով<br>2. Աղբահանության և սանիտարական մաքրման տարածքների սխեմաների, ժամանակացույցի կազմում և հաստատում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Աղբահանությունից օգտվող բնակիչների թիվը -32686<br>• Աղբահանության և սանիտարական մաքրման տարածքների հաստատված սխեմաներ և ժամանակացույց - առկա է<br>• Աղբի տեսակավորում - առկա չէ<br>• Աղբահանությունից օգտվող բնակավայրերի թիվը - 17 բնակավայր<br>• Սանիտարական մաքրում իրականացվող տարածքներ - 245500 քմ<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Միջոցառումներում ընդգրկված աշխատակիցների թիվը – 4<br>• Տեխնիկական միջոցների թիվը – 6<br>• Աղբամանների թիվը - 0<br>• Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 368477.0 դրամ, որից համայնքի բյուջե՝ 368477.0 դրամ | «Խոյ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» Համայնքային հիմնարկ | «Խոյ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» Համայնքային հիմնարկ հիմնարկի ղեկավար | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Ծրագիր 2. Հանրային հատվածների բարեկարգում, կանաչապատ տարածքների պահպանում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Պահպանել և բարեկարգել համայնքի հանրային և կանաչապատ հատվածները | Բազմաբնակարան շենքերի սպասարկման որակի բարելավում 10% | Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Միջոցառումներ.**<br>1. Համայնքի բնակավայրերում շենքերի, շինությունների պահպանում<br>2. Հանրային և կանաչապատ տարածքների պահպանում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Կանաչապատ տարածքների ոռոգման համակարգի սպասարկում – առկա է<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Աշխատակիցների թիվը - 58<br>• Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 3000,0 հազ. դրամ, որից համայնքի բյուջե՝ 3000,0հազ.դր., պետական բյուջե 0,0հազար դրամ | Խոյի համայնքապետարան | «Խոյ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» Համայնքային հիմնարկ հիմնարկի ղեկավար | | |
| **Ծրագիր 3. Համայնքի ենթակառուցվածքների պահպանում և զարգացում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Համայնքային ենթակառուցվածքների զարգացում | • Լուսավորության համակարգի պահպանման շնորհիվ երթևեկության անվտանգության աճ - 5%<br>• | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 տարի | |
| **Միջոցառումներ.**<br>1. Փողոցային լուսավորության ցանցի սպասարկում<br>2. Ապահովվել ջրամատակարարումը բոլոր բնակավայրերում<br>3. Ոռոգման ջրագծերի կառուցում և հիմնանորոգում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Լուսավորված փողոցների քանակը - 65%<br>• Ջրամատակարարման ապահովում- շուրջօրյա<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Աշխատակիցների թիվը - 2 մարդ<br>• Տրանսպորտային միջոցների թիվը - 1 միավոր<br>• Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը 20203.0 հազ.դրամ, որից համայնքի բյուջե՝ 20203,0 հազ. դրամ, | Խոյի համայնքապետարան | «Խոյ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» Համայնքային հիմնարկ հիմնարկի ղեկավար | | |
| **Ոլորտ 3. Կրթություն** | | | | | |
| **Ոլորտի նպատակ.** | • Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից օգտվողների | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, | Համայնքի ղեկավար | 1 տարի | Համապատասխան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Կազմակերպել նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության որակյալ ծառայություններ | տեսակարար կշիռը նախադպրոցական տարիքի երեխաների մեջ, 52%<br>• Մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայությունից օգտվողների տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների մեջ, 21 % | մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | | | մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Ծրագիր 1. Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում համայնքում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Նախադպրոցական որակյալ կրթության կազմակերպում | • Նախադպրոցական կրթության ծառայության | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն |
| **Միջոցառումներ.**<br>1. Խոյ համայնքի ՆՈՒՀ-երի պահպանում<br>2. Կրթադաստիարակչական աշխատանքների բարելավում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Ծառայությունից օգտվող երեխաների թիվը – 469<br>• Սննդի ապահովումը օրվա ընթացքում - 2-3 անգամ<br>• Ծառայության հասանելիությունը բնակավայրերում - 17 բնակավայր<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Աշխատակիցների թիվը - 77<br>• ՀՈԱԿ-ների թիվը - 5<br>• Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 170000,0 հազ. դրամ, այդ թվում՝ համայնքի բյուջե՝ 170000,0հազ. դրամ, | Խոյ համայնքի թվով 5 ՆՈՒՀ | Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ | | |
| **Ծրագիր 2. Արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում համայնքում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Արտադպրոցական որակյալ դաստիարակության կազմակերպում | Մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայությունից օգտվողների թվի ավելացում, 5% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Միջոցառումներ**<br>1.. Առողջ ապրելակերպի և սպորտային, ինչպես նաև մշակութային կյանքի ապահովում Խոյ համայնքի <<Մշակույթի և սպորտի կենտրոն>> ՀՈԱԿ | **Ելքի ցուցանիշներ**<br>• Սպորտային խմբակներին հաճախող երեխաների թիվը – 380<br>• Պարի խմբակներին հաճախող երեխաների թիվը – 231<br>• Նկարչական խմբակներին հաճախող երեխաների թիվը – 109<br>• Երգչախումբ հաճախող երեխաների | Խոյ համայնքի <<Մշակույթի և սպորտի կենտրոն>> ՀՈԱԿ | Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | թիվը – 21<br>• Դհոլի խմբակ հաճախող երեխաների թիվը – 42<br>• Դաշնամուրի խմբակ հաճախող երեխաների թիվը – 34 | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հ. Խոյ համայնքի <<Մշակույթի և սպորտի կ ենտրոն>> ՀՈԱԿ-ի պահպանում | **Մուտքի ցուցանիշներ**<br>• Աշխատակիցների թիվը - 48, որից<br>• Սպորտային խմբակներ- 19<br>• Պարի խմբակների - 7<br>• Նկարչական խմբակներ - 4<br>• Քանոնի խմբակ 1<br>• Դհոլի խմբակ-1<br>• Դաշնամուրի խմբակ-1<br>• Երգչախումբ1<br>• ՀՈԱԿ-ների թիվը-7<br>• Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 152970.0 հազ. դրամ, համայնքի բյուջե 152970.0 հազ դրամ | | | | |
| **Ոլորտ 4. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ** | | | | | |
| **Ոլորտի նպատակ.**<br>• Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, խթանել միջոցառումներին բնակիչների ակտիվ մասնակցությունը<br>• Կազմակերպել համայնքի մշակութային կազմակերպությունների աշխատանքը | Համայնքի մշակութային նախաձեռնություններին բնակիչների մասնակցությունը, 40% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավար | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Ծրագիր 1. Մշակութային կյանքի կազմակերպում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>ԱԼտիվացնել համայնքի մշ ակութային կյանքը | Մշակութային միջոցառումները ավելացել են, 10% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսակա |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Միջոցառումներ**<br>1. Ապահովել համայնքում մշակութային կյանքի կազմակերպումը, հոգալ տոնական միջոցառումների հավուր պատշաճի իրականացումը<br>2. Ապահովել Խոյ համայնքի <<Մշակույթի և սպորտի կենտրոն>> ՀՈԱԿ աշխատանքների կազմակերպումը<br>3. Ապահովել գրադարանային ծառայության մատուցումը | **Ելքի ցուցանիշներ**<br>• Մշակութային միջոցառումների թիվը - 50<br>• Միջոցառումներին մասնակիցների թիվը - 15000<br>• Մշակութային կյանքի ակտիվացում - 10%<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Միջոցառումների կազմակերպմանը ներգրավված աշխատակիցների թիվը - 35<br>• Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 165020,0 հազ. դրամ, համայնքի բյուջե 165020,0 հազ.դրամ | Խոյի համայնքապետարան | Խոյ համայնքի <<Մշակույթի և սպորտի կենտրոն>> ՀՈԱԿ ՀՈԱԿ-ի տնօրեն | 1 տարի | ն ռեսուրսների անբավարարություն: |
| **Ոլորտ 5. Գյուղատնտեսություն** | | | | | |
| **Ոլորտի նպատակ.**<br>Նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը | Ոռոգման համակարգ ունեցող բնակավայրերի տեսակարար կշիռը համայնքի բնակավայրերի կազմում 55% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավար | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Ծրագիր 1. Խթանել գյուղատնտեսության զարգացումը** | | | | | |
| **Ծրագրի նպատակ**<br>Ապահովել վարելահողերի ոռոգումը | Բերքատվության բարձր մակարդակ | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավարի տեղակալ | | |
| **Միջոցառումներ.**<br>• Կազմակերպել համայնքի ոռոգման ցանցի անխափան աշխատանքը | **Ելքի ցուցանիշներ**<br>• Վերանորոգված ջրագիծ - 6.5կմ<br>• Ոռոգվող հողերի մակերեսը - 8238.3 հա<br>• Վեճերի թվի նվազեցում - 5%<br>• Ոռոգման համակարգից օգտվող բնակավայրերի թիվը – 17<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Սպասարկվող ոռոգման ցանցերի երկարությունը – 60.5 կմ | Խոյի համայնքապետարան | Համայնքի ղեկավարի տեղակալ, Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ | 1 տարի | Դոնոր կազմակերպության կողմից ֆինանսավորման ուշացում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | • Աշխատակիցների թիվը - 10<br>• Տեխնիկական միջոցների թիվը - 4<br>• Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 20203,0 հազ.դրամ, որից՝ համայնքի բյուջե՝ 20203,0 հազ. դր | | | | |
| **Ոլորտ 6. Տրանսպորտ** | | | | | |
| **Ոլորտի նպատակ.**<br>Ապահովել տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը՝ ճանապարհային նշանների կահավորման միջոցով | Ճանապարհների բարեկարգման միջոցով երթևեկության անվտանգության աճ - 5% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավար | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Ծրագիր 1. Ճանապարհների պահպանում և շահագործում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Ապահովել համայնքային ճանապարհների սպասարկումն ու շահագործումը | Ճանապարհային նշանների և գծանշումների բացակայության պատճառով տեղի ունեցած վթարների թիվը-0 | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Տրանսպորտի, կոմունալ տնտեսության և համատիրությունների աշխատանքների համակարգման ոլորտը համակարգող բաժնի պետ | 1 տարի | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Միջոցառումներ**<br>Ճանապարհների կապիտալ վերանորոգում<br>Ճանապարհային նշանների տեղադրում և գծանշում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Ասֆալտապատված փողոցներ - 3650 քմ<br>• Հետիոտնի և տրանսպորտի հարմարավետ երթևեկություն - առկա է<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 202896,0 հազ. դրամ, համայնքի բյուջե՝ 202896,0 հազար դրամ, պետական բյուջե՝ 0,0 հազար դրամ | Խոյի համայնքապետարան | Տրանսպորտի, կոմունալ տնտեսության և համատիրությունների աշխատանքների համակարգման ոլորտը համակարգող բաժնի պետ | | |
| **Ոլորտ 7. Սոցիալական պաշտպանություն** | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Ոլորտի նպատակ.**<br>Աջակցել համայնքի կարիքավոր ընտանիքներին | Համայնքի կողմից սոցիալական աջակցություն ստացող ընտանիքների տեսակարար կշիռը համայնքում առկա սոցիալապես կարիքավոր ընտանիքների մեջ, 18% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավար | 1 տարի | Համապատասխան նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Ծրագիր 1. Սոցիալական աջակցություն անապահով խմբերին** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Ապահովել սոցիալական աջակցության նպատակային և թիրախային իրագործումը | Դրամական աջակցությունների մասին սոցիալական և բնակարանային հարցերի ուսումնասիրության հանձնաժողովի արձանագրությունները -առկա են | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | առողջապահության և սոցիալական հարցերի բաժնի պետ | 1 տարի | Համապատասխան նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| **Միջոցառումներ**<br>1. Դրամական օգնությունների կազմակերպում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Աջակցություն ստացած սոցիալապես անապահով, կարիքավոր և առողջական խնդիրներ ունեցող բնակիչների թիվը - 0<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 35000.0 հազ. դրամ, համայնքի բյուջե | Խոյի համայնքապետարան | Սոցիալական և բնակարանային հարցերի ուսումնասիրության հանձնաժողով | | |

## 3. Համայնքային գույքի կառավարման 2025 թ. ծրագիրը

Աղյուսակ 6. Համայնքի գույքի կառավարման 2025 թ. ծրագիրը

| Հ/հ | Բնակավայրերի կամ բնակավայրի փողոցների և թաղամասերի ասֆալտապատում, ոռոգման համակարգի կառուցում | Վիճակի գնահատումը | Գույքի կառավարման գործառույթը | Այլ բնութագրիչներ |
|---|---|---|---|---|
| 1 | Մրգաստան գյուղի N 1 խորքային հորի հիմնանորոգում | | | |
| 2 | Ծաղկունք գյուղում ներտնտեսային ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքներ | | | |
| 3 | Արագած գյուղում ներտնտեսային ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքներ | | | |
| 4 | Այգեշատ գյուղում ներտնտեսային ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքներ | | | |
| 5 | Ծիածան գյուղում ներտնտեսային ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքներ | | | |
| 6 | Գեղակերտ գյուղում Մ.Սարյան,Մարշալ Բաղրամյան փողոցների և Մ.Մարշալ Բաղրամյան փողոցներից մինչև մշակույթի տան հարակից տարածքի ասֆալտապատման աշխատանքներ | | | |
| 7 | Արշալույս գյուղում 19-րդ փողոցի կապիտալ վերանորոգման ասֆալտապատման աշխատանքներ | | | |
| 8 | Արշալույս գյուղում 35-րդ փողոցի կապիտալ վերանորոգման ասֆալտապատման ԱշԽԱՏանքներ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | Արագած գյուղում դեպի գերեզմաններ և հուշարձան պուրակ տանող ճանապարհների կապիտալ վերանորոգման ասֆալտապատման աշխատանքներ | | | |
| 10 | Մրգաստան բնակավայրի դեպի եկեղեցի տանող ճանապարհի կապիտալ վերանորոգման՝ սալարկման աշխատանքներ | | | |
| 11 | Մոնթեավան բնակավայրի 1-ին փողոցի մայթերի սալարկում | | | |
| 12 | Դաշտ բնակավայրի Բարեկամության և Համերաշխության փողոցների գազաֆիկացման աշխատանքներ | | | |
| 13 | Խոյ համայնքի Աղավնատուն բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ | | | |
| 14 | Դողս գյուղում ներտնտեսային ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքներ | | | |
| 15 | Աղավնատուն բնակավայրի մշակույթի տան գազաֆիկացման և ջեռուցման աշխատանքներ | | | |
